

Ո՛Վ ՔԱՂՑՐ ԻՄ ՈՐԴԵԱԿ

Արշալոյսին մէջ կորսուած որդեակ իմ,
Արշալոյսի նման ո՛վ փաղցր իմ որդեակ,
Երբոր երկիրն զգեստաւոր էր լոյսով .
Դէպի քեզի կ'իջնէր ամէն քեւաւոր
Հրեշտակային թռիչքով .
Եւ ծառերն ալ կատարներով թաթաւուն
Էին կապոյտ երկնքին մէջ . եւ գեգ
Շրջապատող լոյսը ամէն աղեկատ
Կը դարձնէր մեղմօրէն
Ձեռքերու մէջ՝ որոնք մարմինդ հանգչեցուցած
Էին այնքա՛ն ծաղիկներով, վարդերով . . .
Արշալոյսի նման ո՛վ փաղցր իմ որդեակ,
Ի՞նչ զգլխած անուն կ'երգէր քու հոգիդ
Անմեղութեան շրթներուն վրայ լուսեղէն,
Երբ թռչուններն որ կ'իջնէին դէպի քեզ,
Դէպի պատկերդ, կտրած էին կարմրավառ
Կտուցներով թելը հիւսուած աստղերէն . . .

Արշալոյսին մէջ կորսուած որդեակ իմ,
Արշալոյսի նման ո՛վ փաղցր իմ որդեակ . . .

ԱՐՄԷՆ ԵՐԿԱԹ